Տեղեկագիր

Բողոքներ Ռասայական խտրականության օրենքի համաձայն

Ի՞նչ է Ռասայական խտրականության օրենքը

Ռասայական խտրականության օրենքը 1975 (Cth) անօրինական է համարում ձեր նկատմամբ անարդարացի վերաբերմունքը ձեր ցեղի, գույնի, ծագման, ազգային և էթնիկական ծագման կամ ներգաղթի կարգավիճակի պատճառով:

Այն նաև անօրինական է համարում ռասայական ատելությունը:

Ե՞րբ կարող է կիրառվել այս օրենքը

Դուք կարող եք կիրառել Ռասայական խտրականության օրենքը հասարակական կյանքի շատ ոլորտներում արդար վերաբերմունք ստանալու համար:

- **Զբաղվածություն** – աշխատանքի ընդունվելը, աշխատանքի պայմաններ, վերապարտաստում, առաջխաղացում, աշխատանքից հեռացվելը
- **Կրթություն** – գրանցվել կամ ուսանել մասնավոր կամ հանրային դպրոցում, քոլեջում կամ համալսարանում
- **Կացարան** – վարձել կամ գնել առանձնատուն կամ բնակարան
- **Ծառայությունների ստացում կամ օգտագործում** – ինչպիսիք են բանկային ծառայություն կամ ապահովագրություն, պետական գերատեսչությունների կողմից տրամադրվող ծառայություններ, տրանսպորտի կամ հեռահաղորդակցման ծառայություններ, մասնագիտական ծառայություններ, ինչպիսիք են իրավաբանների, բժիշկների կամ արևտրական մասնագետների կողմից մատուցվող ծառայություններ, ռեստորանների, խանութների կամ զվարճանքի վայրերի ծառայություններ:
- **Հասարակական վայրեր մուտք ունենալը** – օրինակ՝ զբոսայգիներ, պետական գրասենյակներ, ռեստորաններ, հյուրանոցներ կամ առևտրի կենտրոններ:

Ի՞նչ է ռասայական խտրականությունը

Ռասայական խտրականություն տեղի է ունենում այն դեպքում, երբ անձի նկատմամբ ցուցաբերվում են պակաս բարենպաստ վերաբերմունք, քան այլ անձի նկատմամբ

նմանատիպ իրավիճակներում՝ նրանց ցեղի, գույնի, ծագման, ազգային և էթնիկական ծագման կամ ներգաղթի կարգավիճակի պատճառով: Օրինակ՝ այն կհամարվի <<ուղղակի խտրականություն>>, եթե անշարժ գույքի գործակալը հրաժարվում է տուն վարձակալության տալ անձին նրա հատուկ ռասայական պատկանելության կամ մաշկի գույնի պատճառով:

Ռասայական խտրականություն է տեղի ունենում նաև այն դեպքում, երբ կա մի կանոն կամ քաղաքականություն, որը նույնն է բոլորի համար, բայց անարդար ազդեցություն ունի հատուկ ռասայական, գույնի, ծագման, ազգային և էթնիկական ծագում կամ ներգաղթի կարգավիճակ ունեցող մարդկաց վրա:Սա կոչվում է <<անուղղակի խտրականություն>>: Օրինակ՝ անուղղակի խտրականություն է, երբ ընկերությունը ասում է աշխատակիցներին, որ չպետք է կրեն գլխարկներ կամ գլխաշորեր աշխատավայրում, որը հավանական է կունենա անարդար ազդեցություն որոշակի ռասայական/էթնիկական ծագում ունեցող մարդկանց վրա:

Ի՞նչ է ռասայական ատելությունը

Անօրինական է անել որևէ բան հասարակության մեջ՝ հենվելով անձի կամ մարդկանց խմբի ռասայական, գույնի, ազգային կամ էթնիկական ծագման վրա, որը կարող է **վիրավորել, նվաստացնել կամ ահաբեկել**:

Ռասայական ատելության օրինակներ կարող են ներառել ռասայական՝

- վիրավորական նյութերը համացանցում, ներառյալ էլեկտրոնային ֆորումները, բլոգները, սոցիալական ցանցերի կայքերը և տեսանյութերի փոխանակման կայքերը
- վիրավորական մեկնաբանություններ կամ պատկերներ հրատարակումներում, ինչպիսիք են թերթերը, ամսագրերը, թռուցիկները կամ թերթիկները
- վիրավորական ելույթներ հանրահավաքում
- վիրավորական մեկնաբանություններ հանրային վայրում, օրինակ՝ խանութում, աշխատավայրում, զբոսայգում, հանրային տրանսպորտում կամ դպրոցում
- վիրավորական մեկնաբանություններ սպորտային միջոցառումներում խաղացողների, հանդիսատեսների, մարզիչների կամ պաշտոնյաների կողմից:

Ե՞րբ ռասայական ծագման վրա հիմնված վիրավորական վարքագիծը հակաօրինական չէ

Ռասայական խտրականության օրենքը նպատակի ունի հավասարակշռել ազատ շփման իրավունքը (<<խոսքի ազատություն>>) և ռասայական ատելությունից զերծ ապրելու իրավունքը: Ռասայական խտրականության օրենքը նշում է, որ հետևյալ դեպքերը օրենքի դեմ չեն, եթե գործում են **<<ողջամտորեն և բարեխղճորեն>>**.

- **գեղարվեստական ստեղծագործություն կամ ներկայացում** – օրինակ՝ ներկայացում, որտեղ ռասայական վիրավորական վերաբերմունքը արտահայտվում է գեղարվեստական կերպարի կողմից:

- **ուսումնական կամ գիտական նպատակներով արված հայտարարություն, հրատարակություն, քննարկում կամ բանավեճ** – օրինակ՝ հանրային քաղաքականության քննարկում և բանավեճ, օրինակ՝ ներգաղթ, բազմամշակութայնություն կամ հատուկ միջոցառումներ որոշակի խմբերի համար:

- **արդար և ճշգրիտ զեկույց կազմելը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի վերաբերյալ** – օրինակ՝ թերթում արդար հաշվետվություն ռասայական վիրավորական վարքագծի մասին:

- **արդար մեկնաբանություն անելը,** երբ մեկնաբանությունը անձի անկեղծ հավատքի արտահայտությունն է:

Ի՞նչ կարող եմ ես անել, եթե ենթարկվում եմ խտրականության կամ ռասայական ատելության

Դուք կարող եք բարձրացնել հարցը ուղղակիորեն ներգրավված անձի կամ անձանց հետ:

Եթե սա հարցը չի լուծում, կամ դուք հարմար չեք զգում այն անել, դուք կարող եք բողոքել Ավստրալիայի մարդու իրավունքների հանձնաժողով: Դուք կարող եք նաև խնդրել փաստաբանին կամ արհմիությանը բողոք ներկայացնել ձեր անունից:

Ոչ մի ծախս չկա հանձնաժողովին բողոք ներկայացնելու համար:

Ձեր բողոքը պետք է լինի գրավոր: Դուք կարող եք լրացնել բողոքի դիմումը և փոստով կամ ֆաքսով մեզ ետ ուղարկել կամ դուք կարող եք բողոք ներկայացնել առցանց մեր կայքում: Եթե դուք չեք կարող գրել ձեր բողոքը, մենք կարող ենք ձեզ օգնել:

Որպեսզի ձեր բողոքը վավեր լինի, այն պետք է հիմնավոր վիճարկելի լինի, որ իրադարձությունները, որոնց մասին ցանկանում եք բողոքել, անօրինական խտրականություն է, և պետք է ներկայացնեք բավականաչափ մանրամասներ ձեր մեղադրանքների մասին, ներառյալ այն, ինչ տեղի է ունեցել, երբ և որտեղ է այն տեղի ունեցել և ով է ներգրավվել:

Բողոքը կարող է ներկայացվել ցանկացած լեզվով: Եթե դուք թարգմանչի կարիք ունեք, մենք կարող ենք կարգադրել այն:

Ո՞րտեղ կարող եմ գտնել լրացուցիչ տեղեկություն

Ավստրալիայի մարդու իրավունքների հաձնաժողովի կապի տվյալներն են.

Հեռախոս
Ազգային տեղեկատվության ծառայություն՝ 1300 656 419

TTY: 1800 620 241 (անվճար)
Ֆաքս՝ (02) 9284 9611

Փոստ
GPO Box 5218
Sydney NSW 2001

Առցանց
Էլ. փոստ՝ infoservice@humanrights.gov.au
Կայք՝ www.humanrights.gov.au

Դուք կարող եք բողոք ներկայացնել առցանց, այցելելով՝ www.humanrights.gov.au/complaints_information/online_form/index.html.

Եթե խուլ եք կամ ունեք լսողության խանգարում, դուք կարող եք մեզ հետ կապվել TTY-ով՝ 1800 620 241 հեռախոսահամարով: Եթե դուք կարիք ունեք Auslan թարգմանչի, մենք կարող ենք այն կարգադրել:

Եթե կույր եք կամ ունեք տեսողության խանգարում, մենք ձեզ կարող ենք ըստ պահանջի տեղեկատվություն տրամադրել այլընտրանքային ձևաչափերով:

Այլ հաղորդակցման միջոցներ ձեր ռասայական ատելության բողոքների վերաբերյալ

Եթե դուք մտահոգված եք լրատվամիջոցների վիրավորական պատմություններով, հեռարձակումներով կամ առցանց բովանդակությամբ, դուք կարող եք բողոքել Ավստրալիայի կապի և լրատվության մարմնին (ACMA), Գովազդային ստանդարտների վարչությանը՝ գովազդների համար, կամ Ավստրալիայի մամուլի խորհրդին՝ թերթերի պատմությունների համար: Դուք կարող եք նաև բողոքել լրատվական կազմակերպության խմբագրին կամ կառավարչին:

Եթե դուք մտահոգված եք ձեր հարևանների վիրավորական պահվածքով, կարող եք դիմել Համայնքային արդարադատության կենտրոն՝ խնդրի լուծմանն օգնելու համար, կամ Բնակարանային ապահովման վարչություն, եթե բնակվում եք հանրային տներում:

Եթե ձեզ սպառնում են բռնությամբ կամ բռնի հարձակման եք ենթարկվել, դիմեք ոստիկանություն:

Ընդհանուր իրավաբանական ծառայություն

Եթե մտածում եք բողոք ներկայացնել, դուք կարող եք ստանալ իրավաբանական խորհրդատվություն կամ դիմել արհմիություն: Համայնքային իրավաբանական ծառայությունները կարող են տրամադրել անվճար խորհրդատվություն խտրականության և ոտնձգության մասին: Ձեր մերձակա համայնքային իրավաբանական կենտրոնի կապի տվյալնեը կարող եք գտնել, այցելելով՝ www.naclc.org.au/directory:

Հրաժարագիր. Այս տեղեկագրի մեջ ներկայացված տեղեկատվությունը նախատեսված է միայն որպես ուղեցույց: Այն իրավաբանական խորհրդատվության փոխարինող չէ: